



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

24.08.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/37**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.03.2018թ. թիվ 03/26-3/5749-18 գրությամբ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 27.03.2018թ. թիվ 128 գրության հիման վրա, 29.03.2018թ. թիվ 03/26-3/5749-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից վերջինիս կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-ՔՆՁ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին հայտ է ներկայացրել «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն:

Թիվ 3 արձանագրությունով Պատվիրատուն 2-րդ և 6-րդ չափաբաժինների համար առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին և ծանուցել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչը «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Որակավորման չափանիշները ներկայացնելուց 1 օր հետո Պատվիրատուի կողմից ստացվել է ծանուցում՝ շտկել ի հայտ եկած որոշ անհամապատասխանություններ, ինչն Ընկերության կողմից արվել է 1 աշխատանքային օրում:

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից թիվ 2 և թիվ 6 չափաբաժիններով առաջարկվող ապրանքներն ունեն Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից նախատրակավորումներ, ներառված են Գլոբալ Ֆոնդի ցանկում, որոնք ապացուցում են հայտով առաջարկվող ապրանքի որակը և համապատասխանությունը:

Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուն իր տեխնիկական բնութագիրը կազմելիս առաջնորդվել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից կազմված տեխնիկական բնութագրով, որը վկայում է Պատվիրատուի կողմից Ընկերությանը ներկայացված փաստաթղթերը:

Ընկերությունը թիվ 2 չափաբաժնի մասով նշել է, որ ըստ պահանջվող տեխնիկական բնութագրի տեստի սպեցիֆիկությունը պետք է լինի նվազագույնը 99.95%, Ընկերության կողմից ներկայացված տեստի սպեցիֆիկությունը կազմում է 99.79%, որը գնահատող հանձնաժողովը գնահատել է ոչ համարժեք:

Մինչդեռ ՀՀ ԱՆ-ը նույն ապրանքի նույն տեխնիկական բնութագրի համար ստացել է առաջարկ, որի սպեցիֆիկությունը կազմում է 99.61%, որը ՀՀ առողջապահության նախարարության կողմից գնահատվել է համարժեք այն դեպքում, երբ նույն «նվազագույնը 99.5%» պահանջը եղել է իրենց մոտ:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Տվյալ ցուցանիշի համար գոյություն ունի ԱՀԿ-ի և Եվրոմիության ուղեցույցները, որտեղ հստակ նշված են, որ իմունոֆեռմենտային տեստերի սպեցիֆիկության նվազագույն սահման է համարվում 98% և 99.5% համապատասխանաբար: Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է թե ԱՀԿ-ի և թե ԵՄ-ի կողմից սահմանված պահանջներին:

Ընկերությունը նշել է նաև, որ ընտրված մասնակցի կողմից ներկայացված GenScreen™ ULTRA HIV Ag-Ab տեստի սպեցիֆիկությունը ըստ Գլոբալ Ֆոնդի ցանկի կազմում է ոչ թե 99.95% այլ 99.20%, որը չի համապատասխանում Պատվիրատուի պահանջին:

Ընկերությունը թիվ 6 չափաբաժնի մասով նշել է, որ ըստ պահանջվող տեխնիկական բնութագրի՝ արդյունքները կարդալու ժամանակահատված է սահմանված 5-20 րոպե, այսինքն, արդյունքները պետք է ընթերցվեն սկսած 5-րդ րոպեից և արդյունքների ընթերցումը արգելվում է 20-րդ րոպեից հետո:

Ընկերության կողմից ներկայացվածը՝ 10-30 րոպե գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է չհամապատասխանող, 2-րդ տեղ զբաղեցնող կազմակերպության կողմից

ներկայացված տեխնիկական բնութագրում արդյունքները կարդալու ժամանակահատվածը նշված է 10-20 րոպե, որը գնահատվել է համապատասխանող:

Սա այն դեպքում, երբ Պատվիրատուի տեխնիկական բնութագրով պահանջվում է արդյունքների ընթերցման համար նվազագույնը 15 րոպե, Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրով ներկայացված է արդյունքների ընթերցման համար 20 րոպե, իսկ ընտրված մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրով ներկայացված է արդյունքների ընթերցման համար ընդամենը 10 րոպե:

Ընկերությունը գտնում է, որ այդ կետը հակասում է Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետին՝

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Բացի դրանից ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի Ջգայունությունը համաձայն Գլոբալ Ֆոնդի ցանկի նույնպես չի համապատասխանում տեխնիկական բնութագրին՝

Մասնավորապես՝ զգայունության կետով (պահանջը 100%)՝

«Էրմինե Ֆարմեց» ՍՊԸ- 100%, գնահատող հանձնաժողովի եզրակացությունը՝ չի համապատասխանում,

«Վիոլա» ՍՊԸ- 99.8%, գնահատող հանձնաժողովի եզրակացությունը՝ համապատասխանում է:

Սպեցիֆիկության կետով Ընկերությունը նշել է, որ արդեն ներկայացրել են իրենց մեկնաբանությունները, որոնք վերաբերում են ինչպես 2-րդ, այնպես էլ 6-րդ չափաբաժնին և որոնք համապատասխանում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կանոններին, այսինքն միջազգային ստանդարտներին:

Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում, մասնավորապես հավելված 6.1-ում ներկայացված տեղեկատվությունները կիսատ կամ ոչ լիարժեք են (մասնավորապես ապրանքային նշանի մասում լրացված են արտադրող կազմակերպության անվանումը, կամ ընդհանրապես բացակայում է ապրանքային նշանը), սակայն գնահատող հանձնաժողովը ոչ մի մասնակցից չի պահանջել որակավորման փաստաթղթերի շտկում, այլ այդ պահանջը ներկայացրել է միայն Ընկերությանը:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 48-րդ կետի պահանջները, որի համաձայն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում շտկվել են որակավորման փաստաթղթերը: Ընկերությունը նշել է, որ այդ փաստերը վկայում են գնահատող հանձնաժողովի կողմից կողմնապահ վերաբերմունքի մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին, համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Գնահատող հանձնաժողովը տեխնիկական բնութագրերը կազմելիս միայն 2-րդ և 6-րդ չափաբաժինների համար է սահմանել ԱՀԿ կողմից նախատրակավորման պահանջը, մինչդեռ նույն մրցույթում ներառված մի շարք այլ ապրանքների համար նույնպես կան ԱՀԿ-ի կողմից նախատրակավորում ունեցող ապրանքներ, սակայն մրցույթով նման պահանջ չի դրվել:

ՀՀ ԱՆ կողմից տվյալ հարցին մեկ անգամ արդեն տրվել է հստակ պարզաբանում՝

Հաշվի առնելով, որ ՀՀ-ում ներմուծվող թեստերը չեն ենթարկվում փորձաքննության, թեստերի նկատմամբ առաջադրվել է հետևյալ պահանջը՝ թեստ-հավաքածուն պետք է ընդդրված լինի ԱՀԿ-ի կողմից նախատրակավորված թեստերի ցանկում (WHO list of prequalified in vitro diagnostic products), ինչը թեստ-հավաքածուի որակի ապահովման երաշխիք է: Նշված պայմանը փոփոխության ենթակա չէ:

Իսկ 23-րդ չափաբաժնի համար, որը նախահաշվային գնով ամենամեծ չափաբաժինն է, սահմանել է այլ սահմանափակում՝ Գլոբալ Ֆոնդի ցանկում ներառված լինելու պահանջ:

Փաստացի Պատվիրատուն սահմանափակել է 2-րդ, 6-րդ, 23-րդ չափաբաժինների համար մասնակիցների քանակը՝ կիրառելով նշված սահմանափակումները, կամ էլ մի շարք այլ ապրանքների համար սահմանել է սխալ տեխնիկական բնութագիր:

Նաև անհասկանալի է գնահատող հանձնաժողովի գնահատման չափանիշները, օրինակ՝ թիվ 6 չափաբաժնի համար, որը հանդիսանում է 3-րդ սերնդի տեստ հավաքածու, սպեցիֆիկությունը սահմանվել է նվազագույնը 99.6%, իսկ 12-րդ չափաբաժնի համար, որը հանդիսանում է 4-րդ սերնդի տեստ հավաքածու, սպեցիֆիկությունը սահմանվել է նվազագույնը 99.1%:

Այս ամենը հակասում է Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի և 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներին:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել նշված փաստարկները և «Հերմիտե Ֆարմեց» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/37 ընթացակարգի շրջանակներում 05.04.2018թ. ժամը 11:00-ին և 10.04.2018թ. ժամը 12:10-ին հրավիրված

նիստերի վերաբերյալ, 10.04.2018թ. ժամը 12:10-ի նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ՀՀ առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.03.2018թ. թիվ 128 գրությամբ հայտնել է, որ ՀՀ առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-ՔՆՁ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ձևով քիմիական նյութերի գնման ընթացակարգի շրջանակում «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման փուլում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերի նկատմամբ արձանագրվել է անհամապատասխանություն, ինչի պատճառով մասնակցի հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/37 ընթացակարգի շրջանակներում 05.04.2018թ. ժամը 11:00-ին և 10.04.2018թ. ժամը 12:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 10.04.2018թ. ժամը 12:10-ի նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/37 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/37 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման համար հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-ՔՆՁ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերով Ընթացակարգի 2-րդ և 6-րդ չափաբաժինների համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

N 2	33210000	ԻՖԱ մեթոդով ՄԻԱՎ-ի հակաձին/հակամարմինների (HIV Ag/Ab) հայտնաբերման թեստ-հավաքածու	<p>96 թեստ պարունակող տուփով ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Մեթոդը՝ իմունաֆերմենտային անալիզ (ELISA), 12 ստրիպ x 8 բնիկ: Հավաքածուն պետք է ներառի 96 բնիկ ունեցող միկրոպլանշետ, կոնցենտրիկ վլացող լուծույթ, դրական և բացասական ստուգիչներ, կոնյուգատ 1, կոնյուգատ 2, կոնյուգատ 2-ի նոսրացնող լուծույթ, բուֆեր/սուբստրատ, քրոմոգեն TMB, ռեակցիան կանգնեցնող ռեագենտ: Բնիկներում կոշտ ֆազան պետք է պատված լինի p24 հակաձնի նկատմամբ հակամարմիններով և ռեկոմբինանտային սպիտակուցներով: Նախատեսված է արյան պլազմայում և արյան շիճուկում ՄԻԱՎ-ի p-24 հակաձնի, ՄԻԱՎ 1-ի (ներառյալ M և O խմբերը) և ՄԻԱՎ 2-ի հակամարմինների հայտնաբերման համար: Թեստ-հավաքածուն պետք է ընդգրկված լինի ԱՀԿ-ի կողմից նախատրակավորված թեստերի ցանկում (WHO list of prequalified in vitro diagnostic products):</p> <p>Զգայունությունը՝ 100%, սպեցիֆիկությունը (դոնորների նմուշները հետազոտելիս)՝ նվազագույնը 99,95%, անալիտիկ զգայունությունը ըստ p24 հակաձնի որոշվող նվազագույն կոնցենտրացիայի՝ 25 պգ/մլ-ից (կամ 0,85 IU/մլ-ից) ոչ ավել: Պահանջվող նմուշը՝ չնոսրացված շիճուկ (պլազմա) 75մկլ-ից ոչ ավել:</p> <p>Արտադրողի՝ որակի ապահովման համակարգի եվրոպական (EC), ISO 9001 և ISO 13485 վկայականների առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:</p>
N 6	33210000	Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ ՄԻԱՎ-ի հակամարմինների հայտնաբերման համար, 1	<p>Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ-հավաքածու: Նախատեսված է ամբողջական արյան մեջ, արյան շիճուկում և պլազմայում ՄԻԱՎ 1-ի և ՄԻԱՎ 2-ի հակամարմինների հայտնաբերման համար: Կիրառվող ռեկոմբինանտ հակաձինները՝ ՄԻԱՎ 1-ի համար (նվազագույնը՝ p24 և gp41), ՄԻԱՎ 2-ի համար (նվազագույնը՝ gp36):</p> <p>Հավաքածուն պետք է պարունակի նոսրացնող բուֆեր: Թեստի տեսակը կասետային (Cassette):</p> <p>Զգայնությունը՝ նվազագույնը 100%, սպեցիֆիկությունը՝ նվազագույնը՝ 99,6%:</p> <p>Արդյունքների վերծանման ժամանակահատվածը՝ 5-20 րոպե: Պահպանման ջերմաստիճանը՝ 2-30°C:</p>

			Թեստ-հավաքածուն պետք է ընդգրկված լինի ԱՀԿ-ի կողմից նախաորակավորված թեստերի ցանկում (WHO list of prequalified in vitro diagnostic products): ISO13485 որակի վկայականի առկայություն: Պահպանման ժամկետը՝ առնվազն 12 ամիս: Պիտանելիության ժամկետի առնվազն 65%-ի առկայություն մատակարարման պահին:
--	--	--	--

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 2-րդ և 6-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.03.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված բնութագրին, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է, և 13.03.2018թ. Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է մինչև կասեցման ժամկետի ավարտը արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

5. «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում «ԳՀԱՊՁԲ-ՔՆՁ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է Ընթացակարգի 2-րդ և 6-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերի շտկված տարբերակները:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.03.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.03.2018թ. թիվ 03/26-3/5749-18 գրությունը, ՀՀ առողջապահության նախարարության «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 27.03.2018թ. թիվ 128 գրությունը և կից փաստաթղթերը, «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Հ առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման համար հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-ՔՆՁ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերով Ընթացակարգի 2-րդ և 6-րդ չափաբաժինների համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

N 2	33210000	ԻՖԱ մեթոդով ՄԻԱՎ-ի հակածին/հակամարմինների (HIV Ag/Ab) հայտնաբերման թեստ-հավաքածու	96 թեստ պարունակող տուփով ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Մեթոդը՝ իմունաֆերմենտային անալիզ (ELISA), 12 ստրիպ x 8 բնիկ: Հավաքածուն պետք է ներառի 96 բնիկ ունեցող միկրոպլանշետ, կոնցենտրիկ լվացող լուծույթ, դրական և բացասական ստուգիչներ, կոնյուգատ 1, կոնյուգատ 2, կոնյուգատ 2-ի նոսրացնող լուծույթ, բուֆեր/սուբստրատ, քրոմոգեն TMB, ռեակցիան կանգնեցնող ռեագենտ: Բնիկներում կոշտ ֆազան պետք է պատված լինի p24 հակածնի նկատմամբ հակամարմիններով և ռեկոմբինանտային սպիտակուցներով: Նախատեսված է արյան պլազմայում և արյան շիճուկում ՄԻԱՎ-ի p-24 հակածնի, ՄԻԱՎ 1-ի (ներառյալ M և O խմբերը) և ՄԻԱՎ 2-ի հակամարմինների հայտնաբերման համար: Թեստ-հավաքածուն պետք է ընդգրկված լինի ԱՀԿ-ի կողմից
--------	----------	---	--

			<p>նախաորակավորված թեստերի ցանկում (WHO list of prequalified in vitro diagnostic products):</p> <p>Զգայունությունը՝ 100%, սպեցիֆիկությունը (դոնորների նմուշները հետազոտելիս)՝ նվազագույնը 99,95%, անալիտիկ զգայունությունը ըստ p24 հակաձնի որոշվող նվազագույն կոնցենտրացիայի՝ 25 պգ/մլ-ից (կամ 0,85 IU/մլ-ից) ոչ ավել: Պահանջվող նմուշը՝ չնոսրացված շիճուկ (պլազմա) 75մկլ-ից ոչ ավել:</p> <p>Արտադրողի՝ որակի ապահովման համակարգի եվրոպական (EC), ISO 9001 և ISO 13485 վկայականների առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:</p>
N 6	33210000	<p>Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ ՄԻԱՎ-ի հակամարմինների հայտնաբերման համար, 1</p>	<p>Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ-հավաքածու: Նախատեսված է ամբողջական արյան մեջ, արյան շիճուկում և պլազմայում ՄԻԱՎ 1-ի և ՄԻԱՎ 2-ի հակամարմինների հայտնաբերման համար: Կիրառվող ռեկոմբինանտ հակաձինները՝ ՄԻԱՎ 1-ի համար (նվազագույնը՝ p24 և gp41), ՄԻԱՎ 2-ի համար (նվազագույնը՝ gp36):</p> <p>Հավաքածուն պետք է պարունակի նոսրացնող բուֆեր: Թեստի տեսակը կասետային (Cassette):</p> <p>Զգայնությունը՝ նվազագույնը 100%, սպեցիֆիկությունը նվազագույնը՝ 99,6%:</p> <p>Արդյունքների վերծանման ժամանակահատվածը՝ 5-20 րոպե: Պահպանման ջերմաստիճանը՝ 2-30°C:</p> <p>Թեստ-հավաքածուն պետք է ընդգրկված լինի ԱՀԿ-ի կողմից նախաորակավորված թեստերի ցանկում (WHO list of prequalified in vitro diagnostic products):</p> <p>ISO13485 որակի վկայականի առկայություն: Պահպանման ժամկետը՝ առնվազն 12 ամիս:</p> <p>Պիտանելիության ժամկետի առնվազն 65%-ի առկայություն մատակարարման պահին:</p>

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ԳՀԱՊԶԲ-ՔՆՁ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով գնանշման հարցման մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ԳՀԱՊԶԲ-ՔՆՁ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 2-րդ և 6-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն «ԳՀԱՊՁԲ-ՔՆՁ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով ընթացակարգի հայտի N 6.1 հավելվածով Ընթացակարգի 2-րդ և 6-րդ չափաբաժինների համար ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Չափաբաժնի համար	անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Տեխնիկական բնութագրերը
2	ԻՖԱ մեթոդով ՄԻԱՎ-ի հակաձին/հակամարմինների (HIV Ag/Ab) հայտնաբերման թեստ-հավաքածու	Բիոէլիզա ՄԻԱՎ 1+2 Ag/Ab թեստ հավաքածու / Էլ Այ Դի ՄԻԱՎ 1+2 Ag/Ab թեստ հավաքածու	Բիոկիթ Էս. Էյ, Վերֆեն ընկերություն (BIOKIT S. A. A Werfen company)/ Բեյջինգ Վանթայի Բիոլոգիքլ Ֆարմասի Էնթերփրա Իզ Բո, ԼՏԴ Beijing Wantai Biological Pharmacy Enterprice Co., Ltd.	Իսպանիա/Չինաստան	96 թեստ պարունակող տուփով ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Մեթոդը՝ իմունաֆերմենտային անալիզ (ELISA), 12 ստրիպ x 8 բնիկ: Հավաքածուն պետք է ներառի 96 բնիկ ունեցող միկրոպլանշետ, կոնցենտրիկ լվացող լուծույթ, դրական և բացասական ստուգիչներ, կոնյուգատ 1, կոնյուգատ 2, կոնյուգատ 2-ի նոսրացնող լուծույթ, սուբստրատ, TMB, ռեակցիան կանգնեցնող ռեագենտ: Բնիկներում կոշտ ֆազան պետք է պատված լինի p24 հակաձնի նկատմամբ հակամարմիններով և ռեկոմբինանտային սպիտակուցներով: Նախատեսված է արյան պլազմայում և արյան շիճուկում ՄԻԱՎ-ի p-24 հակաձնի, ՄԻԱՎ 1-ի (ներառյալ M և O խմբերը) և ՄԻԱՎ 2-ի հակամարմինների հայտնաբերման համար: Թեստ-հավաքածուն ընդգրկված է ԱՀԿ-ի կողմից նախաորակավորված թեստերի ցանկում (WHO list of prequalified in vitro diagnostic products): Զգայունությունը՝ 100%:

6	Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ ՄԻԱՎ-ի հակամարմինների հայտնաբերման համար արագ թեսթ (Քոլոդիք ալ Գոլդ Դիվայս)	ՄԻԱՎ հակամարմինների հայտնաբերման համար արագ թեսթ (Քոլոդիք ալ Գոլդ Դիվայս)	Բեյջինգ Վանթաի Բիոլոգիքալ Ֆարմասի Էնթերփրա Իզ Քո, LՏԴ Beijing Wantai Biological Pharmacy Enterprice Co., Ltd.	Չինաստան	Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ-հավաքածու (կասետային-Cassette): Նախատեսված է ամբողջական արյան մեջ, արյան շիճուկում և պլազմայում ՄԻԱՎ 1-ի և ՄԻԱՎ 2-ի հակամարմինների հայտնաբերման համար: Պահպանման ջերմաստիճանը՝ 2-30°C: Թեստ-հավաքածուն ընդգրկված է ԱՀԿ-ի կողմից նախատրակավորված թեստերի ցանկում (WHO list of prequalified in vitro diagnostic products): ISO13485 որակի վկայականի առկայություն: Պահպանման ժամկետը՝ 18 ամիս: Պիտանելիության ժամկետի առնվազն 65%-ի առկայություն մատակարարման պահին:
---	---	---	---	----------	---

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.03.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված բնութագրին, մասնավորապես.

ա. առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում ներկայացված չէ մանրամասն տեղեկատվություն հրավերի պահանջներով սահմանված տեխնիկական բնութագրերի բոլոր բնութագրիչների վերաբերյալ:

բ. N 2 չափաբաժնի մասով ներկայացված է 2 ապրանք: Անհրաժեշտ է առաջարկել մեկ ապրանք՝ իր բնութագրով:

գ. N 2 չափաբաժնով տրամադրված բնութագրում բացակայում է առաջարկվող թեստ-հավաքածուի զգայունության, սպեցիֆիկության, անալիտիկ զգայունության, պահանջվող նմուշի քանակի, ինչպես նաև որակի ապահովման համակարգի եվրոպական (EC), ISO 9001 և ISO 13485 վկայականների առկայության վերաբերյալ տեղեկատվությունը:

դ. N 2 չափաբաժնով տրամադրված բնութագրում բացակայում է առաջարկվող թեստ-հավաքածուի կիրառվող ռեկոմբինանտային հակաժինների (ՄԻԱՎ 1 և ՄԻԱՎ 2-ի համար), զգայունության, սպեցիֆիկության արդյունքների վերծանման ժամանակահատվածի, ինչպես նաև ISO 13485 որակի վկայականի առկայության վերաբերյալ տեղեկատվությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է, և 13.03.2018թ. Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է մինչև կասեցման ժամկետի ավարտը արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն «ԳՀԱՊՁԲ-ՔՆՁ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է Ընթացակարգի 2-րդ և 6-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերի հետևյալ շտկված տարբերակները:

Չափաբաժնի համար	անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծածկան երկիրը	Տեխնիկական բնութագրերը
2	ԻՖԱ մեթոդով ՄԻԱՎ-ի հակաձին/հակամարմինների (HIV Ag/Ab) հայտնաբերման թեստ-հավաքածու	Բիոէլիզա ՄԻԱՎ 1+2 Ag/Ab թեստ հավաքածու	Բիոկիթ Էս. Էյ, Վերֆեն ընկերություն (BIOKIT S. A. A Werfen company)	Իսպանիա	<p>96 թեստ պարունակող տուփով ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Մեթոդը՝ իմունաֆերմենտային անալիզ (ELISA), 12 ստրիպ x 8 բնիկ: Հավաքածուն պետք է ներառի 96 բնիկ ունեցող միկրոպլանշետ, կոնցենտրիկ լվացող լուծույթ, դրական և բացասական ստուգիչներ, կոնյուգատ 1, կոնյուգատ 2, կոնյուգատ 2-ի նոսրացնող լուծույթ, բուֆեր/սուբստրատ, քրոմոգեն TMB, ռեակցիան կանգնեցնող ռեագենտ: Բնիկներում կոշտ ֆազան պետք է պատված լինի p24 հակաձնի նկատմամբ հակամարմիններով և ռեկոմբինանտային սպիտակուցներով:</p> <p>Նախատեսված է արյան պլազմայում և արյան շիճուկում ՄԻԱՎ-ի p-24 հակաձնի, ՄԻԱՎ 1-ի (ներառյալ M և O խմբերը) և ՄԻԱՎ 2-ի հակամարմինների հայտնաբերման համար: Թեստ-հավաքածուն ընդգրկված է ԱՀԿ-ի կողմից նախաորակավորված թեստերի ցանկում (WHO list of prequalified in vitro diagnostic products):</p> <p>Զգայունությունը՝ 100%, սպեցիֆիկությունը (դոնորների նմուշները հետազոտելիս)՝ նվազագույնը 99,95%, անալիտիկ զգայունությունը ըստ p24 հակաձնի որոշվող նվազագույն կոնցենտրացիայի՝ 25</p>

					<p>պգ/մլ-ից (կամ 0,85 IU/մլ-ից) ոչ ավել: Պահանջվող նմուշը՝ չնոսրացված շիճուկ (պլազմա) 75մկլ-ից ոչ ավել: Արտադրողի որակի ապահովման համակարգի եվրոպական (EC), ISO 9001, ISO 13485 վկայականների առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:</p>
6	<p>Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ ՄԻԱՎ-ի հակամարմինների հայտնաբերման համար, արագ թեսթ (Քոլոդիք ալ Գոլդ Դիվայս) 1</p>	<p>ՄԻԱՎ հակամարմինների հայտնաբերման համար (Քոլոդիք ալ Գոլդ Դիվայս)</p>	<p>Բեյջինգ Վանթաի Բիոլոջիքլ Ֆարմասի Էնթերպրա Իզ Քո, ԼՏԴ Beijing Wantai Biological Pharmacy Enterprice Co., Ltd.</p>	<p>Չինաստան</p>	<p>Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ-հավաքածու: Նախատեսված է ամբողջական արյան մեջ, արյան շիճուկում և պլազմայում ՄԻԱՎ 1-ի և ՄԻԱՎ 2-ի հակամարմինների հայտնաբերման համար: Կիրառվող ռեկոմբինանտ հակաժինները՝ ՄԻԱՎ 1-ի համար (նվազագույնը՝ p24 և gp41), ՄԻԱՎ 2-ի համար (նվազագույնը՝ gp36): Հավաքածուն պարունակում է նոսրացնող բուֆեր: Թեստի տեսակը կասետային (Cassette): Չզայնությունը՝ նվազագույնը 100%, սպեցիֆիկությունը՝ նվազագույնը՝ 99,6%: Արդյունքների վերծանման ժամանակահատվածը՝ 10-30 րոպե: Պահպանման ջերմաստիճանը՝ 2-30°C: Թեստ-հավաքածուն ընդգրկված է ԱՀԿ-ի կողմից նախաորակավորված թեստերի ցանկում (WHO list of prequalified in vitro diagnostic products): ISO13485 որակի վկայականի առկայություն: Պահպանման ժամկետը՝ առնվազն 18 ամիս: Պիտանելիության ժամկետի առնվազն 65%-ի առկայություն մատակարարման պահին:</p>

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.03.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված ապրանքների շտկված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին, մասնավորապես՝

Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվել է՝

-թեստ-հավաքածուի սպեցիֆիկությունը (դոնորների նմուշները հետազոտելիս) պետք է լինի նվազագույնը 99,95 %, մինչդեռ Ընկերության կողմից առաջարկված թեստ-հավաքածուի սպեցիֆիկությունը նվազագույնը՝ 99,79 % է:

-պահանջվող նմուշը՝ չնոսրացված շիճուկ (պլազմա) 75 կմլ-ից ոչ ավել, Ընկերության կողմից առաջարկված թեստ-հավաքածուի համար պահանջվող նմուշը՝ 100 մկլ-ից ոչ ավել:

Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվել է՝

-կիրառվող ռեկոմբինանտ հակաձինները՝ ՄԻԱՎ 1-ի համար նվազագույնը՝ p24 և gp41, ՄԻԱՎ 2-ի համար նվազագույնը՝ gp36, Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում կիրառվող ռեկոմբինանտ հակաձինները՝ ՄԻԱՎ 1-ի համար gp120 և gp41, ՄԻԱՎ 2-ի համար gp36, չի համապատասխանում p24 հակաձնի բացակայության առումով:

-Զգայունությունը՝ նվազագույնը 100 %, Ընկերության կողմից առաջարկվել է 99,8 %,

-Սպեցիֆիկությունը նվազագույնը՝ 99,6 %, Ընկերության կողմից առաջարկվել է 99,22 %,

-Արդյունքների վերծանման ժամանակահատվածը՝ 5-20 րոպե, Ընկերության կողմից առաջարկվել է 10-30 րոպե:

Այսպես՝ «ԳՀԱՊՁԲ-ՔՆՁ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 2-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է ձեռքբերել ԻՖԱ մեթոդով ՄԻԱՎ-ի հակաձին/հակամարմինների (HIV Ag/Ab) հայտնաբերման թեստ-հավաքածու, իսկ նույն Ընթացակարգի 6-րդ չափաբաժնով իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ ՄԻԱՎ-ի հակամարմինների հայտնաբերման համար, 1: «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ԳՀԱՊՁԲ-ՔՆՁ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումով նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի

պահանջներին: Միևնույն ժամանակ Ընկերության կողմից հայտի թիվ 6.1 հավելվածով Ընթացակարգի 2-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ներկայացվել են ապրանքի տեխնիկական բնութագրեր, որոնցում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտնաբերելով անհամապատասխանություններ, սահմանված կարգով կասեցրել է նիստը և Ընկերությանը ծանուցել՝ անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ: Ընկերության կողմից ներկայացվել են ապրանքի շտկված տեխնիկական բնութագրերը, որոնց մեջ 2-րդ չափաբաժնի մասով՝ սպեցիֆիկությունը (դոնորների նմուշները հետազոտելիս)՝ նշվել է նվազագույնը 99,95%, պահանջվող նմուշը՝ չնոսրացված շիճուկ (պլազմա) 75մկլ-ից ոչ ավել, 6-րդ չափաբաժնի մասով՝ կիրառվող ռեկոմբինանտ հակաժինները՝ ՄԻԱՎ 1-ի համար (նվազագույնը՝ p24 և gp41), ՄԻԱՎ 2-ի համար նվազագույնը՝ gp36, զգայնությունը՝ նվազագույնը 100%, սպեցիֆիկությունը նվազագույնը՝ 99,6%, իսկ արդյունքների վերծանման ժամանակահատվածը՝ 10-30 րոպե: Միևնույն ժամանակ գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվելով Ընկերության կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, թեստ-հավաքածուների շահագործման ուղեցույցներն, այնուամենայնիվ արձանագրվել է, որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի սպեցիֆիկությունը նվազագույնը՝ 99,79 % է, պահանջվող նմուշը՝ 100 մկլ-ից ոչ ավել (2-րդ չափաբաժին), p24 հակաձնի բացակայություն, զգայնությունը՝ 99,8 %, սպեցիֆիկությունը 99,22 %, իսկ արդյունքների վերծանման ժամանակահատվածը նշվել է 10-30 րոպե (6-րդ չափաբաժին):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն «ԳՀԱՊԶԲ-ՔՆԶ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ

հողվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.03.2018թ. թիվ 03/26-3/5749-18 գրությամբ «Լերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00650302) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Լերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ